Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

В. Е. БУДАГОВЪ
Шкафъ .....
Полка .....
Книга .....

ԼԵՒ ՏԱԼՍՏՕՅ

ԱՂՕԹՔ

ԼԵՒ ՏԱԼՍՏՕՅ.

ԹԱՐԳՄ. ԷՄՄ. ՔԱՀ. ՆԱԶԱՐԵԱՆՑ.

Էլեկտրաշարժ տպարան Ե. Ալեքսիրեանի, Մոսկվա.
1906.

23 AUG 2013

3239

6269

1 | Տպարդ.
Ս-80 | Աղոթք
1500թ.

Ա-5695 | 4/4 30թ.

14 JUL 2009

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳՐԱԳԱՐԱՆ
Публичная Библиотека
Армянской ССР
Ереван, Мясникяна

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳՐԱԳԱՐԱՆ
Հ.Ս.Խ.Հ. Հանրային Գրադարան
Ս.Ս.Հ. Հայկական ՍՍՀ Գրադարան
Ս.Ս.Հ. Հայկական ՍՍՀ Գրադարան

1 [Տպարդ.]
Ս-80

ԼԵՌ ՏԵՐՈՅՏԵՑ.

ԱՂՈԹՔ

Իմ վերջին նամակում ես գրեցի, որ աղօթքն անօգուտ բան է թէ արտաքին աշխարհի անցքերի վերաբերմամբ մեր ցանկութիւններն իրագործելու և թէ ներքին աշխարհի, այն է մեր կատարելագործվելու համար։ Վախենում եմ, չլինի թէ, իմ մեղքից, դուք այնպէս չհասկանաք, ինչպէս ես եմ ուզում. այս պատճառով էլ այդ հարցի, այսինքը աղօթքի առիթով մի քանի բան պէտք է աւելացնեմ այստեղ։

Արտաքին անցքերի մասին, այն է որ անձրև գա կամ ապրի՛ իմ սիրած մարդը՝ կամ ես առողջ լինեմ ու չմեռնեմ,—չի՛ կարելի աղօթել՝ այն պատճառով, որ այդ անցքերը առաջ են գալիս այն օրէնքների հիման վրա, որ Աստուած մի անգամ ու միշտ սահմանել է, այն էլ այնպէս, որ,—եթէ մենք վարվում ենք, ինչպէս պէտք է, այն ժամանակ նրանք միշտ բարերար են լինում մեզ համար։ Մի և նոյն է, թէ մի բարի մարդ լինե՞ համար տուն լինի շինած՞ լինե՞ պաշտպանող ամուր պատերով ու տանիքով (կրիշայով), իսկ ես քմահաճութեամբ ուզենամ լայնացնել կամ փոփոխել պատերի դիրքը և խնդրեմ, որ նա ուզածս կատարի։

Իսկ մեր ներքին կատարելագործութեան համար այն պատճառով չի կարելի աղօթել, որ մեզ տրված է այն

1002
6269

ամէնը, ինչ հարկաւոր է մեր կատարելագործութեանը, ու սրան ուրիշ բան ոչ պէտք է, ոչ էլ կարելի է աւելացնել:

Բայց որ ասում եմ, թէ խնդրողական աղօթքը ոչինչ միտք չունի, չէ՛ նշանակում, թէ չէ՛ կարելի ու չպէտք է աղօթել: Դրա հակառակ. ես այնպէս եմ կարծում, որ, առանց աղօթքի, չէ՛ կարելի լաւ ապրել և, աղօթքը՝ լաւ, հանգիստ ու երջանիկ կեանքի անհրաժեշտ պայմանն է: Աւետարանում ցոյց է տրված, թէ ի՛նչպէս պէտք է աղօթել ու ի՛նչ պէտք է լինի աղօթքի բովանդակութիւնը:

Ամէն մարդու մէջ կա աստուածային կայծ, աստուածային հոգի, ամէն մարդ Աստծու որդի է: Աղօթել՝ նշանակում է, հրաժարվելով աշխարհային բոլոր բաներից, ի՛նչ որ կարող է դրաւել իմ ուշքն ու ըզգացումները (մահմէտականները շատ լաւ են անում, որ—մանելով մզկիթը կամ աղօթքի կանգնելիս—մատներով աչքներն ու ականջները փակում են), շարժեմ մէջս աստուածային բնութիւնը: Սրա համար ամենալաւը՝ Քրիստոսի սովորեցրածն է. որ մանեմ սենեակս ու փակեմ դռներս, այսինքը աղօթեմ՝ բոլորովին առանձնացած, սենեակումս լինի, անտառում, թէ դաշտում:

Աղօթել՝ նշանակում է,—հրաժարվելով այն ամէն բանից, ինչ որ աշխարհային, արտաքին է,—մարդ առաջ բերի իր մէջ իր հոգու աստուածային մասը, տեղափոխվի այնտեղ, նրա միջոցով հաղորդակցութեան մէջ մտնի նրա հետ, որի մասնիկն է ինքը, դիտակցի որ ինքը Աստծու ծառան է, և ստուգութեան ենթարկի իր հոգին, իր արարքները, իր պահանջները, ոչ թէ, ինչպէս պահանջում են աշխարհի արտաքին պայմանները, այլ ինչպէս՝ հոգու աստուածային այս մասը: Ու այսպիսի աղօթքը լինում է ոչ թէ զուտ շարժող մի դատարկ բան ու այնպիսի զրդիռ, որ առաջ են բերում հասարակական աղօթքները՝ իրանց երգերով, սրբերի պատկերներով, լուսավառութեամբ ու քարոզներով, այլ միշտ օժանդակում է կեանքին, փոփոխելով նրան և ուղղութիւն տալով: Այսպիսի աղօթքը մի խոստովանութիւն է, նախկին արարքներն ստուգելը և ապագա արարքների ուղղութիւնը ցոյց տալը: Աւենք թէ ինձ վիրաւորել են, ու ես ատելութիւն եմ զգում դէպ այս-ինչ մարդը և նրա վատութիւնը ցանկանում, կամ չեմ ուզում անել նրան ձեռքիցս. եկած լաւութիւնը. կամ ես զրկվել եմ կայքից-կարողութիւնից, կամ սիրած մարդուցս. կամ թէ տպրում եմ իմ հաւատի փարդապետութեան հակառակ: Եթէ ես չեմ աղօթում, ինչպէս պէտք է, այլ շարունակ անկարգ կեանք եմ անց կացնում,—չեմ կարող ազատվել ինձ վիրաւորողի դէմ ունեցած տանջող զգացումից. հէնց այսպէս էլ՝ կայքիցս կամ սիրած մարդուցս զրկվելը՝ թունաւորելու է կեանքս. և, չուզելով կատարել խղճիս հրամայածը, պէտք է անհանգիստ լինեմ: Բայց, եթէ ստուգեմ, թէ ի՛նչպէս եմ վարվել ինքս ինձ հետ ու Աստծու հետ,—ամէն բան կփոխվի. ես ինձ կմեղադրեմ, ոչ թէ թշնամուս, և կաշխատեմ յարմար ժամանակ գտնել՝ նրան լաւութիւն անելու. իմ կորուստները ես կհամարեմ փոր-

ծութիւն, և կաշխատեմ խոնարհութեամբ տանել այդ կորուստներս ու դրա մէջ կդտնեմ մխիթարութիւնս. և անելիքներս կհասկանամ. առաջվա պէս, ինձնից չեմ թաղցնի, որ կեանքս անհամապատասխան է հաւատիս, այլ, դղջալով, կաշխատեմ նրանց միմեանց համաձայնեցնել և այս ջանքերիս մէջ կդտնեմ իմ հանդստութիւնն ու ուրախութիւնը:

Բայց դուք կհարցնէք, ուրեմն, աղօթքի նպատակն ի՞նչ է:

Աղօթքի օրինակը Քրիստոս «Հայր մեր»-ի մէջ է տվել մեզ, ու այս աղօթքը,—յիշեցնելով մեզ կեանքներիս նպատակը, որ է՝ կատարել Հօր կամքը, և մեր ամենասովորական մեղքերը, այն է՝ մեր եղբայրներին դատապարտելն ու չներելը և մեր կեանքի դլխաւոր փասնդները, այն է՝ փորձութիւնները,— մինչև օրս եղածներից լաւագոյնն է և իմ դիտեցած բոլոր աղօթքներից ամենակատարեալը:

Սակայն, բացի այս աղօթքից, իսկական, առանձնական աղօթքը կազմված է էլի այն ամէն բանից, ինչ որ ուրիշ իմաստուն ու սուրբ մարդկանց, կամ մեր սեփական խօսքերով անուցանում է մեր հոգին՝ դիտակցելու մեր աստուածային սկզբնաւորութիւնը, աւելի կենդանի ու պարզ արտայայտելու մեր խղճի, այսինքը աստուածային բնութեան պահանջները:

Աղօթքը, հոգու բարձրագոյն պահանջների տեսակէտից, մարդու՝ իր անցեալ ու ներկա արարքների ստուգումն է:

Այնպէս որ, առանձնական ու հոգու աստուածայ-

նութիւնը վերականդնող աղօթքը՝ ես ոչ միայն չեմ ժխտում, այլ և հոգևոր, այսինքը իսկական կեանքի անհրաժեշտ պայմանն եմ համարում: Ես չեմ ընդունում խնդրողական ու հասարակական սրբապիղծ աղօթքը, որ կատարվում է երդեցողութեամբ, սրբերի պատկերներով, մոմերով և մինչ անդամ ներկայացումներով:

Շատ անդամ զարմանում եմ, թէ ի՞նչպէս է կարող դոյութիւն ունենալ հասարակական ու խնդրողական այդ աղօթքը այն մարդկանց միջև, որոնք իրանց անուանում են քրիստոնեա, երբ Քրիստոս ուղղակի ու դրականապէս է ասել, թէ պէտք է աղօթել առանձնացած և թէ ոչինչ բան չպէտք է խնդրել, որովհետև «դեռ բերաններդ բաց չարած՝ ձեր Հայրը դիտէ, ի՞նչ որ հարկաւոր է ձեզ»:

Իսկ իմ մասին կասեմ ձեզ,—ուշը չդարձնելով, որ ասելիքս ամենքի համար էլ լաւ է և ամենքն էլ այսպէս պէտք է անեն,—որ ես, շատ ժամանակ է, ինչ սովորութ եմ արել աղօթել ամէն առաւօտ՝ առանձնացած: Ու իմ ամենօրեա այս աղօթքը հետևեալն է.

Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո: Եւ սրանից յետո ես աւելացնում եմ Յովհաննէսի Աւետարանից՝ Քո անունը սէր է, Աստուած սէր է: Սիրու մէջ դանվողը՝ Աստծու մէջ է, Աստուած էլ՝ նրա մէջ. Աստծուն ոչ ոք չէ տեսնում ոչ մի տեղ, բայց երբ մենք սիրում ենք միմեանց, այն ժամանակ նա մեր մէջն է, և նրա սէրը կատարեալ է մեզնում: Եթէ մէկն ասում է՝ սիրում եմ Աստծուն,

բայց իր եղբօրն սատանայ է, սուտ է ասում, որովհետև ոչ իր եղբօրը, —որին տեսնում է,—չէ սիրում, ի՞նչպէս կարող է սիրել Աստծուն, որին չէ՛ տեսնում: Ե՛ղբայրներ, սիրե՛նք միմեանց, սերը Աստծուց է, ամէն սիրող էլ Աստծուց է և ճանաչում է Աստծուն, որովհետև Աստուած սէր է:

Ե՛կեցէ՛ արքայութիւն քո: Ու ես աւելացնում եմ. փնտռեցէ՛ք Աստծու արքայութիւնն ու նրա արդարութիւնը, և այդ բոլորը կտրվի ձեզ: Աստծու արքայութիւնը ձեր մէջն է:

Եղիցի՛ն կամք քո, որպէս յերկինս և յերկրի: Ու այս խօսքերն ասելիս՝ հարցնում եմ ինձ. Ուզի՞ղ է, որ հաւատում եմ, թէ ես Աստծու մէջն եմ, Աստուած էլ՝ ի՛մ մէջը: Հաւատում եմ, թէ կեանքը նրանումն է, որ մարդ աւելացնի իր միջի սէրը: Հարցնում եմ ինձ. արդեօք միտքս բերում եմ, որ այսօր կենդանի եմ, իսկ էգուց՝ մեռած: Ուզի՞ղ է, որ չեմ ուզում ապրել իմ անձնական քմահաճոյքի և մարդկային փառքի համար, այլ միայն՝ Աստծու կամքը կատարելու: Եւ աւելացնում եմ Քրիստոսի խօսքերը երեք աւետարաններից՝ Ոչ թէ իմ, այլ քո կամքը լինի, ու ոչ թէ այն, ինչ ես եմ ուզում, այլ այն՝ ինչ դու ես ուզում, և ոչ թէ այնպէս, ինչպէս ես եմ ուզում, այլ այնպէս, ինչպէս դու ես ուզում:

Հաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր: Աւելացնում եմ. Իմ կերակուրն այն է, որ կատարեմ ինձ ուղարկողի կամքը, և կատարեմ նրա կամքը: Ուրացի՛ր անձդ, առ խաչդ ամէն օր ու արի՛ ետևիցս:

Առէ՛ք վրաներդ իմ լուծը և սովորեցէ՛ք ինձնից, որովհետև հեզ եմ ու սրտով խոնարհ, և կգտնէք ձեր հոգիների հանգստութիւնը, որովհետև իմ լուծը քաղցր է, ու բեռը՝ թեթև:

Եւ թող մեզ դպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց: Աւելացնում եմ. Եւ չի՛ ների ձեզ ձեր Հայրը ձեր մեղքերը, եթէ ձեզնից իւրաքանչիւրը չների իր եղբօրը նրա բոլոր մեղքերը:

Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն: Աւելացնում եմ. Զգուշացի՛ր քմահաճոյքի, անամօթութեան, ատելութեան, որկրամոլութեան, անառակութեան և մարդկային փառքի փորձութիւններից: Ողորմութիւնդ մի՛ տա մարդկանց առջևը, այլ տուր այնպէս, որ ձախ ձեռքդ չիմանա, թէ ինչ է անում աջդ: Եւ անյուսալի է Աստծու արքայութեան համար նա, ով մաքը բռնում է ու յետ նայում: Ուրախացի՛ր, երբ քեզ հայհոյում են ու անարգում:

Այլ փրկեա՛ զմեզ ի չարէ: Աւելացնում եմ. Զգուշացի՛ր սրանից դուրս եկող չարութիւններից, այն է՝ չար մտածումներից, սպանութիւններից (դէպ մարդն ունեցած բոլոր ատելութիւններից), դողութիւններից (օգտվելուց այն բանից, որ չես ձեռք բերել քո աշխատանքով), պոռնկութիւններից, ամուսնական անհաւատարմութիւններից (թէկուզ՝ մաքովդ անց կացրած), սուտ վկայութիւններից, հայհոյութիւններից:

Վերջացնում եմ աղօթքս կրկին Յովհաննէսի Աւե-

տարանի*) խօսքերով. Եւ մենք դիտենք, որ փոխվելոյնք մահից դէպ կեանքը, որովհետև սիրում ենք մեր եղբայրներին: Իր եղբօրն ատողը չունի յաւիտենական կեանք, իր մէջ հաստատված:

Այսպէս եմ աղօթում ես ամէն օր, այդ խօսքերը յարմարեցնելով գործերիս ու հոգեկան դրութեանս: Երբեմն շատ սրտանց, երբեմն՝ քիչ:

Սակայն, բացի այս աղօթքից, ես էլի աղօթում եմ, երբ մեն-մենակ կարդում եմ իմաստուն ու սուրբ մարդկանց գրքերը, ոչ՝ միայն քրիստոնեաների, ոչ էլ՝ միայն հների. և մտածում եմ՝ կանգնած Աստծու առջևը, ու աշխատում դուրս թափել սրտումս հաւաքված բոլոր վատութիւնները:

Այսպէս էլ աշխատում եմ աղօթել կեանքում, երբ լինում եմ մարդկանց հետ ու տարվում եմ կրքերից: Ահա այստեղ աշխատում եմ մտաբերել այն, ինչ որ, առանձնական աղօթքիս ժամանակ, կատարվում էր հոգումս, և նկատում եմ, որ ինչքան անկեղծ է եղել աղօթքս, այնքան հեշտ եմ յետ կենում վատութիւնից:

Ահա այն բոլորը, ինչ որ ուզում էի ասել ձեզ աղօթքի մասին, որպէս դի չկարծէք, թէ ես ժխտում եմ աղօթքը:

Ձեր եղբայր ԼԵՒ ՏԱԼՍՏՕՅ.

Մասկվա, 8 *յունվարի* 1901 *թ.*

Թարգմանեց ԷՄՄ. ՓԱՀ. ՆԱԶԱՐԵԱՆՑ.

---

*) Պէտք է նկատել, որ այդ տողերը Յովհաննէսի առաջին թղթից են առված, ոչ թէ Աւետարանից: *Թարգմ.*

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Национ. Библиотека
7/XI 1922
Именная Мясн. Д на
<< Ազգային գրադարան >>
NL0146211